

* * *

Փառքով մեկնած, սուրբի մը համբարը իր ետեւը՝ ինչ ունեցած էր այս Հայրապետը Հայութեան համար... — Մեծ սիրտ մը, մեծ սէր մը, անկեղծ ու խորին: Եթէ իր աղքատին վիճակը, իր հօտին անհամար կարօտութիւնները, իր հազարաւոր որբերը որոնց բնակարանն ու հաց տուաւ ամէն օր՝ թոյլ չտուին նիւթապէս բարեբարելու հայերուս, սակայն նա սիրեց որքան կրնար իբրեւ բարեկամ և աղօթեց, օրհնեց ու քաջալերեց շարունակ, ինչպէս կը վկայեն Ուխտիս և Մ. Ռափ. վարժարանին նուիրուած իր կողմէն օրհնութեան և սիրոյ շնորհագիրներն ու պատկերները:

Պէտք էր տեսնել զինքը իր հովուական պաշտօնի առաջին օրերուն իսկ՝ թէ որքան յարգալից էր Ուխտիս և անոր վարիչներուն հանդէպ: Ո՛ր և է յանձնարարական, ո՛ր և է բարեխօսութիւն եկեղեցական կամ քաղաքական բարձրագոյն իշխանութեանց քով՝ սիրով ու փութով կը կատարէր. Ուխտիս վշտերուն և ուրախութեան հաղորդակից՝ գիտէր և կը զգար կարեկցիլ ու ուրախակցիլ ի հարկին:

Միաբանութեանս ժամանակագրութեան մէջ անմոռաց պիտի մնայ իր յատուկ գործի ու յարգանքը հանգ. Կիւրեղեան Արքեպ. Արքայ. Արքայ. մահուան առթիւ: Նա եղբոր մը սիրով՝ վշտահար սրտով մասնակցեցաւ մեր այդ մեծ սուգին. այնպիսի սրտայոյզ դամբանական մ'արտասանելով՝ ուր կը զգացնէր իր եղբայրակցութիւնը Ուխտիս հետ: Կը թողում ըսելու իր խոր պաշտամունքն և զմայլանքը Ուխտիս Հիմնադրին հանդէպ՝ զոր իբրեւ սուրբ մը կը յարգէր, և սերտած անոր զմայլելի վարքը՝ գիտէր ի հարկին զգացնել զայն մեզի՝ որդւոցս, այնքան մխիթարական և խրատուսիչ ձեւերով:

Պէտք էր լսել իր հայրական գործաւոր յորդորները մեր վեներաբան Մուրատ-Ռափայէլեան վարժարանի աշակերտութեան, երբ ամավերջի հանդէսներուն պատիւն և ուրախութիւնը կ'ունենայինք զինքն

իբրեւ նախագահ տեսնելով. այդ առիթներուն էր որ «սիրելի զաւակներս» տիտղոսով կը սկսէր ու կը շոյալէր հայրօրէն սէր, գորով, միշտ սրտազին ուղերձ մ'ընելով մեր ազգային ազատութեան, վերելքի և երջանկութեան՝ արցունքի և արիւնի շրջաններէն վերջ: Կը յիշեցնէր անոնց ցեղային մեր ազնիւ արիւնը, կրօնքի և հայրենեաց անվկանդ նահատակներու ժառանգութիւնը, և լաւագոյն ուղին ազնիւ և կրօնասէր հայու կոչման պատրաստուելու մեծն Մխիթարի Հաստատութեան սրբութեան մէջ:

Թէ որքան յուզուած էր մեր ազգային յիշատակով և որքան կը գորովէր մեր նահատակներու որբացած զաւակներով՝ կարելի է նկատել և զգալ հետեւեալ նուագի տողերով՝ որ միակը չէ, և կ'ուզեմ զայն Հեղինակին կտակի մը պէս կրկնել հոս.

ՄԻԽԻԹԱՐԵԱՆ ՀԱՅՐԵՐԷՆ ԽՆԱՄԱՐԿՈՒԱԾ ՀԱՅ ՈՐԲԵՐՈՒՆ

Մոլուցքը կոյր ոչ բարեկամ մէկ ցեղին Արիւն արցունք կը պահանջէ միշտ ձեզմէ, Ոչ մէկ անուշ խօսք, տառապանք, նախատինք Եւ աւերիչ աղաղակ. «Չարկ, ըսպաննէ»:

Չէք գառնուկներ, մինչ խելագար Եւրոպան Ձեր ըսպանդին տեղեկացաւ անտարբեր, Կեանքի, պատուոյ համար, ասոն, կըռուեցաք, Լեզի բաժակը քամեցիք ցըյատակ:

Բայց բարեգութն Աստուած ըզձեզ կը դիտէր, Լըճակիս մէջ կը պատրաստէր ձեզի տուն՝ Յորմէհետէ ընտրեալ հոգին Մըխիթար

Կը ժողվէ մեր մօտ զաւակներն իր Ազգին: Հնապա, գառներ, մէջն այդ օրհնեալ փարախիդ Քնացէք հանգիստ, լիալուսին է այդտեղ:

1 Օգոստոս 1920 Մեծ գորովակցով Պատրիարք՝ ՊԵՏՐՈՍ ԼԱՅՆՈՒՆԷՆ

Արժանի իր սիրոյն՝ Մխիթարեան Ուխտս ինչպէս անոր կենդանութեան յարգալից և երախտապարտ՝ նոյնպէս մահամերձին, նոյնպէս մահացած անոր մարմնոյն քով հակեց, աղօթեց ու ոսկի գմբէթներէն մին

չեւ յետին քնարանը անբաժան մնաց իր արեւակիցներուն, իր հովուական պաշտօնի գործակիցներուն հետ:

Եւ հիմա երբ շարունակ կը վառին լապտեր ու սիրտ իր դամբանին առջեւ ուխտական տաճարին սրբութեան մէջ, մեր

ալ ծունկերը կը խոնարհին, ու բարեկամի ջերմագին սիրով կը կրկնեն ի խորոց սրտէ.

«Չորսմարտեան քո գրոշակ քոց ևմա, Տէր, և արժանի արս՝ զմա, յունեղև յարկաց քոց ընդ սարքս քո»:

ԽՄԲ.

ՀԱՆԳԻՍՏ ՀՈԳԻՈՅ

ԳԵՐ. ԿԱՐԱՊԵՏ Ծ. Վ. ՊԱՏՈՒ ՀԱՍԵԱՆ ՄԵԾԱԻՈՐ ԶՄՄԱՌԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Յուլիս ամսոյ 19-ին երեկոյեան դէմ՝ տառապալից հիւանդութենէ մը վերջ առ Աստուած կը փոխուէր Գեր. Պատուհասեան:

Ծնած էր Մուշ 1878-ի Յունուար 8-ին. եկեղեցական կեանքի կոչումով մտած էր Զմմառեան վանքը և քահանայ ձեռնադրուած 1901-ին: Քսան երկար տարիներ անխոնջ ու եռանդուն աշխատանքով ժողովրդապետական պաշտօններ վարած է Կ. Պոլսոյ մէջ, միանգամայն մեծ գործունէութիւն ցոյց տուած ազգային-եկեղեցական-ինամատարական գործերու մէջ, ինչպէս նաեւ վերջին մեր ազգային ազգայնաբու շրջանին, և շնորհիւ իր անբասիր կենցաղին և նուիրման՝ մեծ ժողովրդակախութիւն շահած:

Զմմառեան Միաբանութիւնն ալ գնահատելով անոր անձն և փայլուն ձիրքերը 1923-ին ընտրեց իբրեւ իրեն ընդհ. Մեծաւոր, պաշտօն մը որուն մէջ վերջնաւորուեցաւ 1931-ին:

Յետ-պատերազմեան դժուար շրջանի մը մէջ իր պաշտօնավարութիւնն իբրեւ մեծաւոր անշուշտ իր մեծ գոհողութիւններն ունեցած է, և որոնց համար երախտապարտ միաբանութիւնը կը սգայ իր մեծաւորի վաղաժամ մահուան վրայ:

Մխիթարեան Ուխտս դարաւոր անձուկ կապերով զօղուած իր երանաշնորհ Հիմնադրի օրերէն իսկ Զմմառեան ազգանուէր քոյր միաբանութեան՝ մինչ կը բերէ անոր իր խորին և անկեղծ ցաւակցութիւնը և եղբայրական մխիթարութեան ջերմ արտայայտութիւնը, ինչպէս նաեւ ամբողջ Հայ Կաթողիկէ Նուիրապետութեան Գերբերջ. Գլխուն, կը մաղթէ Աստուծոյ լիառատ օրհնութիւնն և օժանդակութիւնը վերահաս ընտրութեանց յաջողութեան համար՝ աղօթելով ջերմագին հանգուցելոյն համար որ արժանաւոր մշակի լիառատ պտուղներն առնէ վարձահատոյց Փրկչէն:

ԽՄԲ.